ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անի Մովսիսյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2023 թվականի հուլիսի 10-ից մինչև հուլիսի 21-ը:

3. Հրավիրող կողմը.

Վիեննայի միացյալ ինստիտուտ.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Հարկաբյուջետային կայունություն» («Fiscal Sustainability») թեմայով դասընթացի նպատակն էր զարգացնել և խորացնել հարկաբյուջետային քաղաքականության մշակման հմտությունները, ծանոթանալ վերջինիս վերլուծության ներկայիս ժամանակակից մեթոդներին:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Հարկաբյուջետային կայունության առկա մարտահրավերները,

2) Պետական պարտքի դինամիկան և կապը մակրոտնտեսական շրջանակների հետ.

- պետական պարտքի կանխատեսումները,
- ֆինանսավորման բաղադրիչները,
- ծանոթացում պետական պարտքի դինամիկայի վերլուծության գործիքի հետ (այսուհետ՝ ՊԴՎ),

3) Պետական պարտքի և ՀՆԱ-ի հարաբերակցության կանխատեսում.

- պետական պարտքի դինամիկայի հավասարումը և կանխատեսումները,
- պետական պարտքի և ՀՆԱ-ի հարաբերակցության փոփոխության հիմնական գործոնները,

4) Պետական պարտքի նպատակային ցուցանիշին հասնելու նպատակով հարկաբյուջետային ճշգրտման ուղիները.

- հարկաբյուջետային կոնսոլիդացիա,
- պարտքը կայունացնող բյուջեի առաջնային/ընդհանուր մնացորդ,
- հարկաբյուջետային ճշգրտման ուղիների արդյունքների կիրառությունը ՊԴՎ-ում,

5) Պետական պարտքի դինամիկայի բազային սցենար և սթրես թեստեր

- տարբեր այլընտրանքային սցենարներ և սթրես-թեստեր,
- հովհարային դիագրամներ,
- սթրես-թեստավորման արդյունքների ընկալումը ՊԴՎ-ում,

6) Երկարաժամկետ հարկաբյուջետային խնդիրներ

- բնակչության ծերացումը և հարկաբյուջետային հետևանքները,
- կենսաթոշակային համակարգեր և բարեփոխումներ,

7) Պարտքի կայունության ցուցանիշները և պարտքային ճգնաժամի ռիսկը.

- պարտքի կայունության սահմանումները և ցուցանիշները,
- պարտքի պոտեցնալը և սահմանային շեմեր,

8) Հարկաբյուջետային ռիսկեր և ճգնաժամեր, հարկաբյուջետային ճշգրտումներ

- հարկաբյուջետային ռիսկերը,
- պայմանական պարտավորությունների ինտեգրումը հարկաբյուջետային կայունության շրջանակում.
- ճգնաժամերի միջև փոխկապակցվածություն (հարկաբյուջետային/ֆինանսական),
- ֆիսկալ արձագանքները ճգնաժամերին,

9) Կլիմայի փոփոխությունը և հարկաբյուջետային խոցելիության գործոնները.

- Կլիմայի փոփոխությունները և դրա հետևանքները տարածաշրջանի համար,
- Կլիմայի փոփոխության դեմ պայքարի միջոցառումներ, հետևանքների մեղմում և հարմարվողականություն,

- Կլիմայական ռիսկերի ինտեգրում հարկաբյուջետային շրջանակներում,

10) Ինչպես հաշվի առնել կլիմայական ռիսկերը և հարմարվողականության/մեղմացման միջոցառումները ՊԴՎ-ի համատեքստում.

- բնական աղետներ և ՊԴՎ,
- մոդելավորման այլընտրանքային ուղիներ,

11) Պետական պարտքի դինամիկան և գնաճը

- հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության փոխազդեցությունները,
- գնաճի ազդեցությունը պետական պարտքի դինամիկայի վրա՝ տեսություն և որոշ էմպիրիկ ապացույցներ,
- Ինչպես մոդելավորել այդ ազդեցությունները ՊԴՎ-ում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ժամանակ ելույթներն իրականացվել են գործնական աշխատանքների, քննարկումների, բանավեճերի տեսքով (պայմանական տնտեսությունների օրինակով), որոնց ընթացքում պարզաբանվել են հարկաբյուջետային և պետական պարտքի քաղաքականության առանձնահատկություններն ու խնդիրները:

Մասնակիցների կողմից ներկայացվել են նաև շնորհանդեսներ՝ կոնկրետ երկրների օրինակներով:

Ընդհանուր առմամբ, դասընթացը բավականին հետաքրքիր էր՝ հարուստ վերլուծություններով և դրանց վերաբերվող տեղեկատվությամբ: Դասընթացից ստացված գիտելիքները կօգտագործվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետագա աշխատանքներում:

Բոլոր դասախոսությունները իրականացվել են շնորհանդեսների միջոցով՝ մասնակիցների ակտիվ ներգրավմամբ: Կազմակերպվել են սեմինարներ, խմբակային աշխատանքներ և մասնակիցների կողմից կատարված աշխատանքների հիման վրա պատրաստվել ու ներկայացվել են շնորհանդեսներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում

նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկաբյուջետային, ինչպես նաև պետական պարքի գծով քաղաքականության մշակման և իրականացման առումով առաջարկում եմ լայնորեն օգտագործել միջազգայինորեն կիրառելի մակրոտնտեսական վերլուծության գործիքները (ՊԴՎ):

Ստորագրությունը, ամսաթիվը:

26.07.2023թ.